հասցնում: Այն օրից, որ նրանք դադարեցին հայերէն խօսելուց, դադարեցին եւ հայ լինելուց: Նրանք դարձան լուսաւորչական քրդեր: Շատ հասկանալի է, որ լուսաւորչական եկեղեցիից դուրս գալով եւ մտնելով բողոքական եկեղեցին, կը դառնան բողոքական քրդեր, եւ եթէ բողոքական եկեղեցին նոյնպէս թողնեն եւ մտնեն, օրինակ, բուդդայական եկեղեցին, կը դառնան բուդդայական քրդեր:

Երկու երիտասարդները զարմացած կերպով նայեցին միմեանց երեսին: Սագօն շարունակեց.

— Նոյն բանը պատահեց եւ հարաւային Միջագետքի՝ այսինքն Մերդինի, Մուսուլի եւ Բաղդադի կողմերի արաբախօս հայերի հետ: Նրանք եւս կորցրել էին մայրենի լեզուն, ապրում էին արաբական սովորութիւններով, խօսում էին արաբերէն եւ իրանց հայ էին համարում նրանով միայն, որ պատկանում էին լուսաւորչական եկեղեցուն: Երբ կաթոլիկութիւնը նրանց մէջ մտաւ, դադարեցին իրանց հայ կոչել եւ դարձան կաթոլիկ արաբներ: Ոմանք նրանցից քիլդաներէն էին խօսում, կաթոլիկութիւնը ընդունելուց յետոյ խառնոեցան քիլդանի կաթոլիկների հետ:

Խօսակցութիւնը տեւեց բաւական երկար. առարկան շատ մօտ էր որպէս երկու երիտասարդների սրտին, նոյնպէս եւ Սագօյի համար: Բացի դրանից, կրօնափոխութիւնը դարձել էր հայերի համար մի ընդհանուր, հասարակական հարց: Օտարազգի քարոզիչները, կաթոլիկ, բողոքական, եզոիտ, ամէն կողմից մուտք էին գործել հայերի մէջ, տարածել էին զանազան քաղաքներում եւ գիւղերում: Դպրոցներ եւ ժողովարաններ էին հիմնում: Ժողովուրդը ընդհանուր խմորման մէջ էր: Ոմանք դրամի համար, որ քարոզիչները բաշխում էին իրանց նոր հաւատացեալներին, ոմանք մահմեդականների հարստահարութեան դէմ պաշտպանութիւն գտնելու համար, որ խոստանում էին քարոզիչները, ոմանք զզուած լինելով հայ քահանաների, հայ կղերի ագահութիւնից, իսկ խիստ սակաւները, ճշմարիտ համոզմունքով, թողնում էին հայոց եկեղեցին եւ մտնում բողոքական եւ կաթոլիկ եկեղեցու գիրկը: Հայ ժողովուրդը բաժան-բաժան էր լինում, ամէն տեղ պատահում էին կռիւներ, խռովութիւններ եւ մշտական երկպառակութիւն: Գործերի այդ դրութեան մէջ անկարելի էր, որ մտածող անձինքների ուշադրութիւնը չգրաւէր այդ աղէտաւոր երեւոյթը, որ սպառնում էր հայոց ազգային ամբողջութեան քայքայմանը, մանաւանդ մի այնպիսի ժամանակում, երբ օտարների բռնութեան դէմ մաքառելու համար հարկաւոր էր ընդհանուր միաբանութիւն, հարկաւոր էր միութիւն եւ սէր: Բայց Աւետարանի սէրը եւ եղբայրութիւնը